

# Ա. Լ. Լ. Ա. Հ. Վ. Է. Բ. Տ. Ի. Ն. Ե. Բ. Ը.

ՊԱՅԱԶԱՏՔ ԿԱՄՄԱՐԱԿԱՆԱՑ

## Չ.

562 Թուականին Փոքր Յուստինոս կայսեր ժամանակ Ներսէս Կամարապան, որ և Բասեղի ալ կ'ըստէր, յառաջ Պարսից թագաւորին համարող էր, կ'երեւայ որ իր հօրեղբոր Ներսէս Պարսիկին պատճառաւ կայսերմէ երես պահեր էր, իրեն ֆնաս մը չբերէ, կամ ուրիշ մէկ առիթ մը կար գուցէ, որ պատմիչներ չեն յիշեր: Ետքը կրկին կայսեր կողմն անցաւ և արեւելեան զօրաց սպարապետ եղաւ, ու Պարսից Խոսրով թագաւորին դէմ շատ քաջութեամբ կռուեցաւ, և պարսիկներ զարհուրեցուց, սակայն կռուին մէջ սաստիկ վերատորելով ընկաւ: Մինչդեռ Պարսիկներ կ'աշխատէին զինքն գերի բռնել,

իր Սահակ եղբայր արծիւի պէս վրայ հասաւ ու ազատեց: Մեր պատմիչ չիշխեր Ներսէսին զաւակ ունենալը, այլ միայն կը հետեցնէ որ այս երկու եղբարքն ալ շատ քաջութիւններ ընելէն հարձ' այս անցաւոր կեանքը անանց կենաց հետ փոխեցին, և թէ Սահակ սպարապետ իր քաջութեամբ ժառանգ թողաւ իւր սքանչելի որդին Ներսէս:

## Է.

591. Թուականին Մորիկ հայկազուն կայսեր զուտն էր այս կամարական Ներսէս<sup>2</sup>, որ Արեւելեան բանակին՝ Պարսից թագաւորին դէմ՝ Սպարապետ կարգեց, ու Մուշեղ Մամիկոնեան իշխանին օգնական զրկեց, որոնք մեծ քաջութեամբ կռուեցան Պարսից դէմ, յաղթեցին անոնց, ու Հաստատանն զուրս մերժեցին: Բայց երբոր 603 թուականին Փոկաս կայսր զուրկ քաջեց, Մորիկ Հայկազուն կայսր սպաննել տուաւ, ու ինքն անոր տեղ անցաւ նէ,

1. Ներսէս Բասեղին չէր Պարսից դէմ պատերազմում ու ճանողն, այլ Սահակի եղբայր Ներսէսը, զոր վերջ յիշեցին: Անճիչ է համարել որ պատմիչներ Ն. Բասեղեայն համար բան մը չեն յիշեր: Պրոկոպիոս (պատմիչ. Գոթ. Բ. 13. 16. 18) կ'աւանդէ թէ Բասեղին Ներսէս պարսիկին հետ 5,000 սպառազն զօրք զրկեց Իտալիա Բելլիսարիոսին, որոնց հետ և սասնմին զանց մ'ալ Հայոց, և թէ ստոյն կը երամայր Ներսէս Բասեղի (տես նաեւ Հ. Մ. Չամչեան պատմ. հատ. Բ. Կր. 267-270): Իսկ Բասեղեայ որդին Սահակ, և սորա որդին Ներսէս որքէ պատմիչներ չեն յիշեր ընդհակառակն: Աստի կարելի է Ե. զիտում յիշուածներուն հետ նոյն համարել գտածք, որոնք հասնածին հոս կրկնուած են: Ի զէպ' այստեղ ես պէտք եմ գնահդել որքէ երկու Ներսէսներուն, — Թերսիս փոքր ինչ երէկ կամ կրտսեր ժամանակաւ, — որոնց ստալիներ կը իշխատէի Չ. զարու քիչ ծանօթ՝ քայց հմուտ պատմիչ մը՝ Յովսիս: Արդ այս Բ. Թաթլոյ և Վարսոի հետաքերական պատմութեան մէջ, յետ պատմիչի Ս. Վարսոի կամ Գրիգոր Նշխարներուն յայտնուելը, կը յարէ: «Վպա Խոսիք իշխանն Կամարապան չի՞նէ զանիս, անուանելով զնա Գրիգոր Վանք, և զձեզ զեղ ի Բաղրսանդայ»: Հաստեղն այս Դուրիթ Կամարապանը՝ Բաղրսանդայ և Արշարունաց արերին մին ըլլաւն էր, և կ'արդեր 557-574 թուականներում: Ինչ երկրորդ կը կոչուէր Չարսի, ի թէ սպաազուրիս մը չէ՞ զի Ս. Երևակոյի և զբէ Կոստանդնուսներուն մէջ: «Ի ժամանակի սպարապետութեան Հայոց ի Պարսից, և սպաննելոյն կամարապանին Չարսիս զիտորն»: Արեւան (Երևակ, Կր. 5) յամեն 571 պատճառն կը նշանակէ այս զեղբոր: Նայել ունի նաեւ Չամչեան (Պատմ. հտ. Բ. Կր. 284): Եւ այս ընդամենական պատմագրաց համաձայն՝ Վարդան Բ. Մամիկոնեանին կը վերաբերի այն: Արանց մերժեմ.

Լու յոյն պատմագրաց վկայութիւնը, որոնց կը համարուին նաեւ Սո. Արդիկ, շատ հասանելի է՝ որ քաջարի Կամարականները այս մեծ զեղբուն մէջ ես գործակից եղած ըլլան Մամիկոնեաններուն, քայց յամեն 572 և ոչ թէ 571-ին:

2. Այս Ներսէսը՝ զոր անուններ Կամարական կ'անուանէ և Ներսէս Բասեղեայ որդի, իրեն վերջնայտն կեանք տարեթիւնն ու Մուշեղ Մամիկոնեանին հետ ունեցած նիդակակցութեամբ — Մորիկ կայսեր օրով — Չամչեանին (Պատմ. Բ. հտ. Կր. 292, եւն) ցրածին քաջ կողմնակցութեամբ: Այս իր շքեղ կերպարանաւ և հանճարաւ շատ մարդն համարուած մտլոյ ոսկի ալ անուանուած է ժամանակակից բանաստեղծներ Կրիկոպոսէ: [Ը Բոյ (Hist. du Bas-Emp. X. 166, 259, 332 6) Չ. գարու վերջեր Ներսէս անունով հայազնի ընդան մը կը յիշէ՝ իր կուսակալ Դարսի, զոր Արշան՝ Կամարական կը համարի: Ատոնք նոյնութիւնն անկէ իսկ յայտնի է զի Պարսից թագաւորը Խոսրով անոնց օգնութեամբ Վահրամայ սպաապետին յաղթելէն հարձ' Մորսայ հետ Դարս քաջակն եւ Մորիկ կայսեր կու տայ և Ներսէսն ալ մեծամեծ պատիւներով կը պատուէ (տես Չամչեան, Պատմ. հտ. Բ. Կր. 293): Աստի հասնածին այս զեղբուն հարց կողմնակալ կամ քաղաքապետ կարգուած ըլլալուն է Դարս քաղաքին:

Աւաման կամ Աւէմ գիւղի հարգոյն արժանապարտեան մը մէջ (տես Արշարուն Երևակ, Կր. 125) — որ գրուած է Ներսիկի 27 երրորդ տարին, այն է յամի Տնասն (636-637 ըստ Աւելեանի, — կը յիշուի Երևակայ և Արշարունեաց տէր Ներսէս) (Կամարապան) մ'ալ, որ է Լուսինեան թողած է անանուն ճնդնակը: Սեբեոս պատմիչն աս, ժամ յամ 652, առանց յատուկ անուանակցութեան՝ իրայ յորհակի թուով Երևակայ իշխաններ կը յիշէ «Երեւան յողջոյն Կոստանդին կայսեր ի կարեն»:

Ներսէս կամարական իր բարերար կայսեր մահուան վրայ շատ ցաւելով ու վշտանալով, Փոկաս կայսերմէ ապստամբեցաւ. Փոկաս ալ հնարքով ձեռք բերաւ այս քաջ զօրագետը և ողջ ողջ այլեց կրակին մէջ: Իայց Պարսից Խոսրով Թագաւոր, որ շատ կը սիրէր զՄօրիկ կայսր և զՆերսէս կամարականն, զօրքով Փոկաս կայսեր վրայ յարձակեցաւ, Յունաց յաղթեց և մինչեւ Խակիւտարի ձօնեցաւ, շատ քաղաքներու տիրեց, Երուսաղէմ քաղաքն ալ առաւ և Քրիստոսի սուրբ Խաչը գերի տարաւ: Այս քաջագուն Ներսէս Ապետին երկու որդիք կային, կ'ըսէ նոյն պատմիչ, Արօր և Ս Կանդարաւ, որոնք իրենց նախնեաց պէս, գրեթէ կեանքերնին միշտ կուրներու մէջ անցուցին Պարսից և Հազարացոց ղէմ:

Ը.

650 Թուականին երբոր Հազարացիք Հայաստանի մէջ ծաւալեցան մինչեւ Կարնոյ գաւառը տիրեցին, և զայիբրու պէս

1. Այս երեք կամարականներն երկուցին անուանըզ ցանց ըրած է յիշել անանուն պատմիչը, սակայն Արշարունեաց եպիսկոպոսոց Յսեկի մէջ կը յիշուի Գարիկ կամարական մը այսպէս. «Գրիգորին ամս ԻԳ՝ մինչեւ ցՃԾԵ Թուական նոր ստուգարին (— 706) լինի այս, յորում արքր գնաւակային եկեղեցոյն Վարդանիկերսի Գարիկ կամարական, և ճշտ լուր տեսնեալ՝ իէ դուստր Վահանայ Պարսկին գիտատմութեան անուն ժառանգեաց, վասն Քրիստոսի Աստուծոյ շարքարեալ ել խառան Երջալեացոց: Գրիգորին նոյն ետ այլ ամս Իս: Շատ հասնական է որ այս Գարիկս եղած ըլլայ Սահակ կամարականի շուտօժ որդոց մէկը, ինչպէս Թուականն իսկ նոյնը կը հաստատէ: Գարձեալ՝ վերեւ տառն անունս յիշուած Վահան պատրիկ «գուստրք» նոյն և դած կ'երեւի բնագրի մէջ յիշարատուած Շուրաբի ճեմ, որ ինձ հակամամանակագրական կը տեսնուի և յոյժ զի՞՞՞՞, դիտելով որ բնագրի յաղորդ աղոթելով Վահան պատրիկը՝ իբրև որդի Ներսէս Ապետի կը ներկայանայ, և այս 786 Թուականին իսկ Խաչը: Այստեղ ազգաբանութեան անանուն ճշգրտակար և կամ Քանան վարդագետը շարակար կերպով շփոթեր է այս և յաջորդ զլուսով՝ կ'ըստի՞՞՞ որոշ Թուականներով ապրոյ երկու Ներսէսները և Վահանները: Եւ այլ շփոթութիւնն երեւուլ համար պէտք է պարզել այսպէս: Այս Ներսէսը նոյն է Էդարուն վերջերք պայծառ ժայռոյ Շիրակայ և Արշարունեաց տերը ճեմ, զոր Անանիս և Փրլնն Շիրակացիք և Գրիգոր Արշարունի «Ներսէս կամարական, Արիսկայա Պարսիկ և շինջ եկեղեցեաց» կ'անուանեն՝ դրուտեաց: Յամին (583—651) Բուստրնիւտնու Բ. կայսր Հայաստան այցելած ժամանակ զինքը իշխանացեալ կը

չորս կողմն տարածվեցան, այս քաջ իշխաններ անոնց ղէմ կինալու բաւական ուժ չունենալով, ամբողջ բերդերուն մէջ քաշվեցան, երբեմն ալ Տայոց ամրոցներու մէջ մնացին. ստոր Համար ալ առաջու պէս այս երեւելի քաջ իշխանաց անունները ստէպ ստէպ չեն յիշուիր: Սակայն, կ'ըսէ նոյն պատմիչ, որ Արշոր ու Սպանդարատ Հազարացոց զխաւորին հետ բարկկամացան և մեծ մեծ պատիւներ առին և արտօնութիւնք իրենց գերդաստանին համար: Արշարին վեց հատ մանչ զաւակ կային, բայց Սպանդարատ մինակ մէկ զաւակ մ'ունեցաւ Սմանկ անուն: Արշոր իր երկու որդւովք մէկ պատերազմի մէջ մեռաւ, Սահակ իշխանութեան յաջորդութիւն առաւ Հազարացոց իշխանէն 705 Թուականին: Սահակ երեք՝ որդի ունէր, անդրանիկին անուն Արշակ էր, և այս Արշակին որդին Ներսէս Կամարական՝ Սմբատ իշխանին հետ միաբանեցաւ և շատ քաջութիւններ ըրին Հազարացոց ղէմ. բայց այս պատերազմներու ընթացքին մէջ Ներսէսի Շուրան ազջիկն գերի ընկաւ Հազարացիք Հայոց վրայ, Արշակագարտ պատուանամբ, իր ձեռագործ Թուլինի եկեղեցոյ արձանագրութեանց համաձայն, զորս կը յիշէ Ալեքան, այն սեզ յիշատակուած Շուրանը՝ Ներսէսի կինն էր. սա ունէր նաեւ Հուսնա որդի մ'ալ, որ մեր անանուն պատմիչ աղքէն զիտպիք է անշուշտ:

Արս պայպաւան էր Վահան պատրիկ կամարականը, որուն կ'ընծայէր՝ Բ. դարու առաջին քառորդին՝ Գրիգոր Արշարունի Բ՝ Ներսէսածոց մեկուսութիւնը, կուրծով զինքը միանդամայն էւ Պաշտուածին: Սա՝ Արցիկ Ներսէս կը կոչ զինքը շփոթելով Քրեւա, իր հօրը Ներսէսի հետ: Սա տեսնելով ազգին աղանկերը՝ յամին 650—1 ստանձնացած է Բագրեւանդայ Ս. Աստուածածին վանքը և խիտ ճշմութեամբ անցուցած իր կեանքը լսեն Չաճեան Պատմ. ճ. Բ. եր. 378):

Իսկ յաջորդ, այն է Թ. դիտած, յիշարատուած Ներսէս Ապետն է ճայ պատմագիրներուն ծածօթ և Շիրակ վերջ վերջ տարը՝ Ներսէս կամարականը, որ Բ. դարուն վերջերք վաճառելով, ըստ Հ. Ալեքանի, անցործօքն իրենց հօրեանկան կալուածները՝ Արշարունիք և Շիրակ Բագրատունեաց, իրենք սնով՝ սեղով գնացին ու Հաստատուական Շայգազմի ամբար և անմատչելի բերքը Վարայրվորոյ: և վարք յիշուած Վահանն ալ այս վերջին Ներսէսի պայպաւանն է՝ ինչպէս ժամանակն իսկ կը ցուցնէ յայտնապէս:

Ուրիշ պատմագիրներու լուծած այս կէտն է ահ՝ որ կը շարունակէ մեր անանուն պատմիչը կամ ժամանակագիրը յաղորդ կամարականներու պատմութիւնը, որը որպէս աստաւ է նայնանուն անուններով՝ այնչափ ալ աղքատ և և ազաւազ պատմական արարուածներով:

բացուց ձեռքը, որ հաւատքին վրան հաս-  
տատ կեննալուն համար դռնն չարչարանք-  
նեբրով մարտիրոս ըրին:

Թ.

789. Մինչև և այս թուականը կամսա-  
բականաց ձեռքն էր Բասենի գաւառն,  
բայց երբոր Հագարացիք շատ զօրացան,  
անոնց բնութեան չկարենալով դիմանալ՝  
ան գաւառէն բուրովին ձեռք քաշեցին.  
և Շաղազով գացին իրենց Վարայր-վարոյ  
բերդը, ուր շատ շինութիւններ ըրին: Աս  
միջոցիս Կիրսն՝ Ապոստոլն որդիք Վարայ,  
Վանսն և Գաղատն աւելի զօրացան, բայց  
լեւոն ու Կոտայնոյն պատկերամարտ կայ-  
սերացմէ զգուելով, մէկ քանի ժամանակ  
և ոչ միշտ Հագարացուց անձնատուր եղան:

Ժ.

829. Թուականին Թէոփիլոս կայսր,  
երբոր Հագարացուց վրայ յարձակիլ ու-  
զեց, Վարայ կամսարականին կոմսութեան  
պատիւ տուաւ, և անոր երկու եղբարքն  
ալ իրենց քաջութեան համար պատուեց:  
Խաղտեաց գաւառն, որ Տրասիդոնի և  
կարնոյ մէջ կ'իյնայ, բուրն ալ լազիս-  
տանի մէկ մասին հետ աս երեք իղբարց  
կառավարութեան յանձնեց: Ասոնք իրենց  
կեննքը երբեմն պատերազմի և երբեմն  
խաղաղութեան մէջ անցուցին, և իրենց  
յանձնուած գաւառները ծաղկեցուցին ու  
հանդիստ պահեցին: Վարդ կամսարակա-

նին մեծ որդին էր Մուշեղ, և Մուշեղի  
որդին Սանակ: Յովհանէս Չմշկիկ կայսեր  
համար ոմանք և այլն պատմիչն կը գրեն,  
որ Սանակ կոմսարոկանին Արոսս ապկա-  
նէն ձեռք է՝ 963 թուականին՝ և Թեոփիլոս  
Խաղտեաց իշխանին քսն է: Այս միջոց-  
ները ծաղկեցան Բագրատունիք, շատ զօ-  
րացան և մեծ մեծ յաղթութիւններ ընե-  
լով թագաւորութեան պսակը և թագ ա-  
ռին: Անոր համար Հայոց ցրուած իշխան-  
ներ անոնց բով ժողկեցան, հոգի առին և  
իրենց գաւառներու տիրեցին և կորսնցու-  
ցած իշխանութիւնը ու պատիւ նորէն  
գտան: Եւ ասկէ ետքը մեր պատմիչը կամ  
սարականաց ազգարանութիւնը սասնկ կը  
շարունակէ, Սահակի որդին շրտանս՝, և  
Հրահատի որդին Վստն, Վահանի որդին  
Բագրատոս, Բագարատի որդին Կերսես,  
Կերսէսի որդին Արշոր, Արշարի որդին  
Շուարշ, Շաւարշի որդին Վարդան Հօր,  
որ իւր քաջութեամբ և անյաղթելի ա-  
արիւթեամբ անուանի եղաւ, ու Բաբերդի  
իշխան կարգեցաւ: Այս միջոցներս Յու-  
սուփ ամիրապետ Հայոց երկիրն արեց  
աւերակ զարծուց: Շատ իշխաններ սպան-  
նեց, և շատերը ըրիստոնէութեան համար  
նահատակեց: Կամսարական իշխանը ասոր  
ասէն Շաղազովի և Տայոց ամուր բերդերու  
մէջ կը պատսպարուէին: Կրթիէ այս ժա-  
մանակներու մէջ էր որ Դաւիթ կերպապա-  
լատ զօրացաւ. որուն քաջութեան գործ-  
քերը իրեն ժամանակակից պատմիչներ  
պարագայով կը գրեն, մեզ աւելորդ է  
կրկնել: Կամսարական Վարդան հօրին

1. Այս պարզ անունացուցակը՝ ստանց որոշ ժամ-  
նակի և որոյն պատմութեան՝ նախապէս ըսածնիս կը  
հաստատէ. բայց բոլորովին անհիմն է՝ զի յամին 1044-  
կը յիշատակուի (Չամչեան, Պատմ. հո. Բ. եր. 927)  
Վառնատ ոմն - ստանց ազգանունի - իբր գործակալ Գր-  
Վազխարտի: Վառն և Բագրատու կը յիշատակուին առ  
կ. Պերսիսոսէնի (տես Չամչեան, եր. 726) յամին  
808, բայց առհիւ իբր Բագրատունի. Յամին 908 կը  
յիշուի (Չամչ. եր. 431) Վարդան ոմն՝ չայկաբոս առա-  
ջինի, որ կայսր ընտրուելուն համար՝ Կիլիկիոսը ըրու-  
նաւոր՝ գինքը կը կտրցցնէր, որուն համար նա ալ կ'ա-  
ռանձնատար ի Պատի և աղօթից կը պարագէր: Կայն  
տեղ և մի և նոյն թուականին ժող, այն է յամին 892,  
և յիշուի նաև Արշարի չայազգի մը՝ որպէս Կամսա-

պետ և Պատրիկ, որ Նոյնպէս ունեցած կ'աւանդուի յու-  
կամս Վարդանի բաղին և զբարատութեանը: Կերսեսն  
կը յիշէ Մոս. Աւուսայեցի 1166-1167 թուականին, կո-  
չեակով գինքը. «իշխան Հայոց ի Բաբերտազ գաւառէ»,  
Կազիկի տան կորովի և յոյժ հանձարեց իմաստասեր  
էր, որ ուսած էր համբաւաւոր Արդինայի մէջ: Ահաւասիկ  
համարուն և պատմական անուններ, որոնց սակայն կը  
պակի կ'ամսարական մայրոսներ: Յամնայն զէպո՝ կա-  
րող էին ստանցմէ ոմանք չայքնի պայտատութեամբ և ո-  
մանց ալ մայրենեք ըլլալ կամսարական, ինչպէս որ  
էր Տայոց Վասիլը, որ ըստ վկայութեան Առնայնցոյն  
յամին 1112 յալբոցեց Գոզ Վասիլին իշխանութեան  
մէջ, զոր մեր անանուն հեղինակը ըսած է:

արժանի յաջորդ եղաւ իւր որդին Ներսէս  
Քաչազունն:

### ԺԱ.

1049) Թուականին՝ Կարնոյ գաւառին  
մէջ երեւելի էր Արծն կամ Արզն քաղաք,  
որ թէոդուպոլիս քաղաքէն երեք ու կէս  
ժամ հեռու է՝ արեւմտեան հիւսիսի կողմն՝  
թեղաք բլուռած լեռան ստորոտ, որ հի-  
մա Ղարաղղ կ'ըսուի: Այս քաղաք բերդ  
չունէր, մէջը երեք հարիւր հազար բնակիչ  
կար, և ութ հարիւր եկեղեցիք. Պար-  
սիկք և Սկիւթացիք այս քաղաքին վրայ  
յարձակեցան, շատ մարդիկ ջարդեցին,  
քաղաքը առին աւերակ դարձուցին, և շա-  
տեքն ալ գերի ըրին. այդ աղէտալի ժա-  
մանակին մէջ Ներսէս կամսարական թե-  
րեւս օգնութիւն գացեր էր անոնց. քա-  
ջութեամբ կովեցաւ, կ'ըսէ մեր պատմիչը,  
ու նոյն պատերազմի մէջ մեռաւ: Տուղբիլ  
Պարսից թագաւոր այս մեծ քաղաքը ա-  
ւերելէն ետքը՝ շատ կողմերու տիրեց, շատ  
քաղաքներ աւերակ դարձուց, շատերն ալ  
սուրի բերան մասնեց և գերի տարաւ:  
Ասկէց ետքը կամսարական իշխանաց գրե-  
թէ լոկ ազգարանութիւնը կը շարունակէ  
մեր պատմիչն, առանց անոնց մէկ երեւելի  
գործքը նշանակելու. և կ'ըսէ որ Պարսից,  
Սկիւթացուց և Հագարացուց բռնութենէն  
շատ տկարացան ու թշուառացան. իշխանք  
միշտ ամուր բերդերու մէջ թագատի կե-  
նալով կեննը կ'անցնէին, և ժողովուրդը  
հարտահարութեանց և կեղեքմանց մէջ  
մինչեւ աշխարհաւերն լանկիթիմուր և մին-  
չեւ վեշտասաններորդ դարը, այս է հոգար  
թուականէն մինչեւ 1515 - 20. որ ա-  
տեն մեր պատմիչին շարունակութիւնը  
ուրիշ մը կը սկսի, միշտ աղէտալի դէպ-  
քեր անպակաս մէկ զմէկը յաջորդեցին:  
Իսկ կամսարական ցեղը թէպէտ տկարա-

ցաւ և թշուառացաւ, բայց իր նախարա-  
րութեան պատիւը չկորուս, իւր Ազնուակա-  
նութեան շարունակ յաջորդութիւնը պա-  
հեց մինչեւ ցայսօր, վարդան հզօր կամ-  
սարականին որդին Ներսէս, անոր որդին  
Միսն պիկ, Միսն պէկին որդին Մարու-  
սաղա, Մամբուսաղայի որդին Մեկիթ Սա-  
նակ, մելիք Սահակի որդին Սըշակ, Ար-  
շակի որդին Ներսէս, որ լանկ թիմուրէն  
ետքը գորացաւ, կ'ըսէ պատմիչն, և օս-  
մանեանց հաւատարիմ ըլլալով՝ իրեն պէ-  
կի պատիւ տուին և միանգամայն Բարբրդի  
ու Սպերի կողմին կառավարիչ ըրին.  
վասն զի օսմանեան թագաւորին ու մեծ  
բղեշխնեբուն շատ սիրելի էր, կ'ըսէ: Կ'ե-  
րեւայ և շատ հաւանական է, որ մեր  
պատմիչն իւր այս ազգարանութիւնը և  
պատմութիւնը այն Ներսէսին խնդրանօք  
չինքն է և ասոր կը նուիրէ: Այս Ներսէս  
իշխան ետքը հաւատքին համար նահա-  
տակուեցաւ, երկու հատ որդիք թողով,  
Արշաք և Ներսէհ, որոնք անկէ ետքը Մէ-  
լիք անունով կը յիշատակուին: Այս ան-  
ցեալ թուականներու մէջ լանկ թիմուրի  
և անոր յաջորդ թաթար խաներու Հայաս-  
տանին մէջ ըրածներ ու աւերածութիւն-  
ները բոլոր գրեր են իւր ժամանակակից  
պատմիչներ. մեր համառօտ ոճը չնեքեր  
մեզ մի առ մի գրելու գանոնք: - Մեր  
պատմիչն այս միջոցներ կամսարականաց  
մէկ մասնաւոր գործք մը չյիշեր, բայց  
անոնց գերի իյնալ կամ իրենց տեղերէն  
գաղթական ըլլալն ալ չի ցըցըներ, որով  
ծիշդ կ'իմացվի՝ թէ ասոնք իրենց գեր-  
դաստանը քաջութեամբ կը պահպանէին  
Տայոց անառիկ բերդերու և քարայրներու  
մէջ:

Հայաստանի վերջի աւերիչն եղաւ Շա-  
հարաւ՝ Պարսից թագաւորն, ան ատեն  
Հայաստանի մեծ մասն օսմանեան պե-  
տութեան ձեռք էր, որ Շահարաւս թէպէտ  
ընչ մը տեղ յառաջ իսպազ, բայց ձեռք  
անցած երկրի Հայոց ժողովուրդը գերի  
պէս ընեց իր տէրութեան մէջ տարաւ.  
այս բռնաւորս Շահագամի և իսպառնաց  
գաւառները չանցաւ, և անոնց բնակիչնե-

1. Քաղաքի նկարագիրն, ատուը և այլն, - տարե-  
թիւով հանդերձ, - Չամբանի պատմածին նման է (տես  
Պատմ. հա. բ. եր. ԳԳՏ), ուր սակայն այս Ներսէս  
կամսարականին անունը բնաւ չյիշուի և ոչ իսկ լաւ-  
տիկերացոյ, Առողկայ և Մասթ. Բուռայեցուց քով:

րուն ֆուսս մը չկըցաւ տալ. վասն զի Սինան փաշան շուտ մը հասաւ անթիւ զօրքերով, և Պարսիկները բոլոր Հայաստանէն ըջեց հանեց՝ սաստիկ ջարդ մը տալով, ու անոնց բռնութենէն ցանուցիր եղած ժողովուրդը ամէնն ալ բերաւ իրենց տեղերը նստեցուց և խնամեց:

ԺԲ.

1606 թուականին երբոր Սինան փաշան մնաւ, անոր ձեռքի տակ եղած փաշաներ ու պէկեր ինքնագլուխ եղան, մէկ մէկու դէմ կոխ բացին, թագաւորէն սպըստամբեցան, ու սկսան խեղճ ժողովուրդը նեղել ու կեղեքել. ասոնք ձէլալիք ըսուեցան, որոց զլիաւոր ու անուանիք էին Քանաքըրլի Մէհմէտ, թոփալ (սաման և Քէօօօղլի Հիւրիշան, և այլն: Աս ձէլալիներու ժամանակը Կամարական իշխանըը իրենց նախնեցոց քաջութեան հոգին սաղին՝ ազգը և ընտանիք ասոնց ձեռքէն պաշտպանելու համար, ուստի Ալշուրի որդին մէկիք Մահուկ և իւր որդին Սահակ Հայոց քաջ երիտասարդները իրենց հետ միացընելով՝ հայրենի ամրոցներու և բերդերու տիրեցին և զօրացան, անանկ որ ձէլալիք ալ անոնց զաւառները երթալու չէին համարձակեր: Երբոր Տէրութիւնն այս ձէլալիները վերցուց և թիչ մ'ատեն իսղաղութիւն տիրեց, ասոնց երեսէն փախըստական ժողովուրդը իրենց տեղերը դարձան: Եւ անկէ ետըը, 1652 թուականին՝, լատին քարոզիչներու ձեռքով ուղղափառութեան հաւատքը տարածվեցաւ Տայոց

և Շաղագոմի զաւառներ, ան ատեն Կամարական Սահակ և իւր որդին Նիսրես, ուղղափառութիւն ընդունեցին, և էրաշխուտ աւանին մեծ մասն ալ անոնց հետեւեցան: Սակայն մահմէտականաց հարկապահանջութիւնը սաստկացան օրէ օր. անոնց բռնութեան չղիմանալով Տայոց, Ռիտեաց և Շաղագոմի ժողովուրդը սկսեր էին հետ զհետէ մահմէտական ըլլալ՝, անանկ որ Շաղագոմ զաւառ զրեթէ տասն զիւղ հազար քրիստոնէսցի մնացեր էին, և անոնք ալ զառնալու վրայ էին: Այսպէս կը գրէ միւր պատմութեան անանուն շարունակողն. « Ներսէս Կամարական ոչ « կարաց զմանալ բռնութեան Տաճկաց, « որ զօր ամենայն նեղէին զնա, թող զի « և ինքն իսկ Ֆրանկացեալ էր՝ ստիպէին « զքրիստոնէսայս ի տաճկութիւն դառնալ. « զզին Մահմէտին ընդունել և սալափաթ « զալ, թող զայլ հարստահարութիւնս, « զորս էնիշարիք, տէլիք, և հայթայթ « անէին նոցա, որոց զլիաւորն էր ու « բացեան Պէթի պէկ, որ ընդ անցաւոր « փառս աշխարհի փոխեաց զլոյս հաւ « աստն իւր, և փոխարէն իւրոց ուրացու « թեանց ընկալաւ ի մեծ բզեչխն կարնոյ « զկցղայ զիւղն թորթոնոյ, և ապա ի « բռնութենէն ուրացողին պաշարեալ՝ զրեւ « թէ մեծ մասն Շաղագոմ զաւառին զմէհ « մէտականութիւն ընկալաւ: Ապա ամենեւ « քեան եղեն զող և աւազակ, որք սկսան « անթիւ չարիս հասուցանել քրիստոնէից « զեկեղեցիս նորս ի մղկիթ փոխէին, և « է զի վերիվարս իւրեանց կապէին ի « մէջ սուր սաւառաց՝ ի պղծել զսուրբ

1. Աս թուականն առաջ իսկ ուղղափառութիւնը տարածուած էր այդ կողմ, ինչպէս որ անկեղծ և տեւոսի Միքայէլ կաթողիկոսի յամին 1584 առ արքայան Պապի Պիոս Գ. գրած պաշտօնական թղթին, և Գրիգոր Թ. Պապի յամին 1584 ճանաձ կողովակէն և Հայոց վրայ ցոյց տուած զուրգուրանքէն ալ: Իսկ յամին 1652 ի Տայս դրեւած լատին քարոզիչներու մասին գոր կը յիշէ Ռաճան վարդապետ — բերն եղական ղէպը մը, — և ոչ իսկ յիշատակութիւն մը կը դռնենք Չամչեանի ձով պատմութեան մէջ: Մ'ըք էին կամ ի՞նչ կարգէ կարծէք թէ դիմամբը ըլլած է:

2. Սակայն դիտել կու տանք որ՝ ո՛չ Արք. Թարթիզեայ, ոչ թոփմ. Մեծօփեոյցն, ոչ Ջաքարիս Սարկա-

ւազի և ո՛չ ալ իրենմա Չէլէպիի պատմութեանց մէջ ճանդիպեցայ եւ Թիւ. զարու կրկրորդ կէսն կատարուած ամբողջ ճայ զաւառներու մահմէտականացման վրայ ո՛ր և է անկարկ մը, թող թէ այդպիսի անուան մը: Չարմաւաշի է զարձեալ, որ այս պատմիչներս որ սովոր են մեծցնելով նկարագրել ուրացութեան որ և է մասնական ղէպը, առոր վրայ լուսիւն պահած ըլլան: Այս իսկ դիտելի է որ (մահմեցոց ցով առաջին անգամ Ձերթճ (— յաղթող) մակդիրը գործածողն եղաւ Կ. Պոլիս առ նորը՝ Սուլթան Մէհմէտ Բ. ուստի ուրացեալ ճայու է ճամբ անսպասելի բան մ'էրու ինքեան մի և նոյն շքեղ սիրտըսը կրէն՝ միայն հաստատարաց ըլլալուն կամ ընելուն համար:

« տեղիս , զուստերս մատաղս և զկոյս  
 « աղջկունս բոնի յափշտակեալ ի ծնո-  
 « ղացն թուրբացուցանէին . զանդս , զչա-  
 « յիրս և զպարտէզս նոցա ինքեանց սե-  
 « փականէին : Զայս և զտոցին նման ա-  
 « ղէտայիս և զթշուառ հետեւութիւնս ի-  
 « ըացն ստեւեալ և մտախորհ եղևալ կամ-  
 « սարականն Ներսէս , որ առ ժամն մէլիբ  
 « և զլիսաւոր էր Հայոց ազգին , և էր  
 « սիրելի յաչս ոստիկանին կարնոյ , և  
 « զելս իրանց չգտեալ՝ հրամանաւ նորս  
 « առ զընտանիս և զազգակիցս իւր և  
 « զամենայն բնակիչս Երաշխուտ աւանին  
 « և այլոց զիւրօրէից որ ի հաւատ քրիս-  
 « տոնէութեան կային ղեռեւս , փրծեալ ի  
 « ձեռաց ուրացողին Ֆէթիի , փնաց նորօք  
 « հանդերձ ի մերձակայ գիւղօրէս կարնոյ :  
 « Բայց կամսարականն՝ ինքն որ էր մեծ  
 « համբայ և մէլիբ և այր անուանի նստաւ  
 « ի Հինձը գիւղ կարնոյ . ուր բազում-  
 « թիւն էր Քրիստոնէից և մեծ կուսաւ-  
 « կալն այնպէս պատշաճ դատեցաւ նմա . . .  
 « Նա անդ ելից զաւուրս իւր ի բար-  
 « տք ձերութեան , իւրոց նախնեաց և  
 « անուան իւրոյ եթող ժառանգ զորդիս  
 « իւր , որոց երիցուն անուն էր Սահակ ,  
 « նա և զթոռունս իւր : Ահա ցայս դար  
 « եհաս սոյնգունակ շարունակութիւն կամ-  
 « սարական ազգին , որ կորոյս գնախնի  
 « վայելչութիւն և զփառս իւր : Թող աղիտ-  
 « զորմ լացցէ Հայաստանն զղիւցազուն  
 « նահատակս իւր զոր կորոյս և միւս ան-  
 « զամ գտանելն յանհնարիցն է » : Այս  
 իտաքերով կը լմնցընէ , մեր պատմիչին ա-  
 նանուն շարունակողն , կամսարական ազ-  
 գին շարունակութիւնը , զորն որ ես հիմա  
 կը փափաքիմ լեցնել Հնձոց , Թորթոմայ  
 և կարնոյ հնագէտ ձերերու պատմութիւնն  
 և աւանդութեանց հետեւելով , բայց առանց  
 ստութեան ճիշդ եղեալն և ստոյգը պատ-  
 մելով , միշտ համատուտ կերպով մը :

ԺԳ.

1694 թուականաց մտեր կը վախ-  
 ճանի Ներսէս կամարականն , որուն գե-

րեզմանն Հինձը գիւղին գերեզմաննոցն է ,  
 որուն գերեզմանաքարին վրայ ալ գրուած  
 է իր անուն , ըսաց այն տեղի ձերոց մէկը  
 Ես շատ փնտռեցի , չգտայ : Գուցէ հողուն  
 տակ ծածկվիբ է , կամ վերցվիբ : մինչև  
 սաոր օրը այս գերդաստանին մականունը  
 կամարտերէր կամ Գամարտիբ էր : Ասոր  
 միւս որդիք քանի ըլլալ յայտնի չեմ գի-  
 տեր , բայց մեծ որդին Սահակ ան առեն  
 անուանի էր . սաոր ալ վկայութիւն կը  
 բերեմ Շիպակցի տիրացու Անաստասին  
 պատմութիւնը : Այս տիրացու Անաստաս՝  
 կրօնիւր Հայ Հոռոմ էր , 90 տարուան ,  
 ծականկաճ մարդ մը , այն կողմի հին բա-  
 ներու շատ տեղեկութիւն ունէր . ինքն ի  
 բնէ Թորթոմու Շիպակ գիւղէն էր և 1828  
 թուականին Ռուսին տէրութեան մէջ գաղ-  
 թեալ էր տունով ի Տաշրաց գաւառ՝ ի Դաղ-  
 կի , ու գիւղ մը շիներ էին իրենց հին  
 Շիպակի անուամբ : Ես երբոր Տիֆլիսէն  
 1846 թուականին ղէպ յԱխալցիսա կը  
 դառնայի նոյն համրով , օր մ՝այն գիւղ  
 կեցայ այս մարդուն տունը . առիւտ շատ  
 հին բաներ պատմելէն ետքը , իտաքը Աւ-  
 լահովրտեան գերդաստանին վրայ դար-  
 ձաւ , ըսաց որ « իմ հայրս՝ Ալլահովր-  
 « տիին հայրը Սահակ քահանա լաւ կը  
 « ճանչնար և անոր բարեկամն էր . ա-  
 « սոնց ցեղը Ֆռանկ էին՝ իրենց բուն  
 « զեղ իսաշուտ կամ Երաշխուտ՝ մեր Շի-  
 « պակէն շատ հետու չէր . այն գեղին  
 « մարդիկ իրգիւրիւմի գեղեր չուեր էին ,  
 « գեղն աւերակ մնացեր էր , հոն գտնձ  
 « պահուած կայ կ'ըսէին . անգամ մ'ես  
 « ալ , տղայ էի ղեռ , փնտռելու գացի .  
 « տեղ մը փորեցինք՝ իտաչ քար մը ելաւ ,  
 « որուն վրայ սասակ գրուած էր . «կամ-  
 « սարական Ներսէս նահատակին գերեզ-  
 « մանն է , որուն սուրբ մարմինն » են . . .  
 « Ասկէց անդին քարին մնացեալ կտորն  
 « կտորբեր էր : Գարձեալ ըսաց որ՝ իմին  
 « հայրս կը պատմէր միշտ զովիւրով ու  
 « կ'ըսէր , թէ կամարտեր հնուց ի վեր  
 « շատ երեւելի ազգ էին և մեծ տուն մը ,  
 « որ փաշայի ուժ և զօրութիւն ունէին :  
 « Թորթոմ իրենց ձեռքն էր , այս մեծ

# Կ Կ Ո Ւ

( Այլիշամի ծնողագիրներէն )

« բերդերն ու եկեղեցիներ, որ հիմա աւ-  
 « շերակ են, բոլոր անոնց շինածն է.  
 « մինչև ( Սլիթիի և Կիսկիմի վրայ իշխա-  
 « նութիւն կը բանեցնէին: Ետքը մէկ նգո-  
 « ված հայ մը տանկացաւ ու Ֆլիթի կող-  
 « վեցաւ, ասիկա Կամասարենց դէմ նա-  
 « խանձ պահելով, զանոնք մեծերուն ու  
 « փաշային խամզեց, ինքն ալ կտրտելու  
 « շուն մ'էր, անոնց ունեցած արտեր,  
 « պարտէզներ և գեղերը բաշեց ձեռքի-  
 « րէն առաւ, ու շատ քրիստոնեայք ալ  
 « բռնի տանկացուց: Կամասարենը ալ աս  
 « բանին չդիմանալով, փաշայէն հրաման  
 « առին ու մնացած քրիստոնէից հետ ի  
 « միասին ելան անկէց ու Հինձը գացին.  
 « հոն չիֆթիվ առին, երկրագործութիւն  
 « կ'ընէին: Կամասարենը Հինձը ալ համ-  
 « բայ էին: Սահակ քահան շատ բանի-  
 « բուն մարդ մ'էր, նալճիութիւն ալ կ'ը-  
 « նէր, անոր համար տանկներ նալճի  
 « Սահակ քահան ալ կ'ըսէին: Ասոր տղան  
 « Աստատոյր կամ Աստատմտոտոյր, կ'ըսէր  
 « Հայրս, ես լաւ գիտեմ ու շատ բարե-  
 « կամս էր. անանկ լեզուանի ու ճարտար  
 « և քաջ մարդ մ'էր՝ որ Տահկի պէկեր իրմէ  
 « կը քաշվէին. Աստուած ալ տուաւ՝ շատ  
 « յառաջ եկաւ. ասոնց հացը՝ մէյտանն  
 « էր, ասոնց դուռներ աղքատաց ու միւ-  
 « սաֆիրի համար միշտ բաց էր: Ետք  
 « Հայեր ասոր թշնամի եղեր էին, Ֆոսնկ  
 « է ըսելով, բանտ դնելով ճէրիմէ տալ  
 « տուին: Անկէ ետք տունով քաղաք գնաց,  
 « ինքն ալ յերուսաղէմ ուխտ գնաց՝ մահ-  
 « տէսի եղաւ, ես ալ զինքն ճերմակ մորուք  
 « տեսայ կ'ըսէր »: Ահա տիրացու Անաս-  
 « տասին պատմութիւնը, որ միւս պատմու-  
 « թեանց շատ համաձայն է, որ ալ կաս-  
 « կածելու տեղ մը չթողուր: Ի վերայ այսր  
 « ամենայնի մենք այս յայտակ ցցընելէն  
 « ետքը, դառնանք ուրիշ հին ծերերու պատ-  
 « մութեանց հետեւելով, մեր պատմութեան  
 « կարգը շարունակենք մինչև մեր օրը:

Ողջ էր անասին հերիկ զեղանի  
 Այրնկաւու գարնայոյ,  
 Ի զի գանապան փայլն դմը երկնի,  
 Լբան մայրիք զողջոյ թոյ,  
 Այն ինչ մանուկաց փթթել է մարմանդ  
 Լբան ըզգայնդ անուշակ.  
 Միթէ կարողես կամ ասող անվրկանդ  
 Լինի գարնան քեզ զուշակ,  
 Ընդ քեզ ողջունեմ, հեր զբարթարեր,  
 Էւ ես ծագկանց զգոյնակ,  
 Մինչ ի հովանոյս հնչեն ինչ այր  
 Թուռնք զողորիկ եսանակ,  
 Խոտորեալ աքղայն համբակ ընդ անտառ  
 Կապել նարտ երփնունակ,  
 Յախործ ծայնիդ լուր՝ կատալ կայ սոնտա  
 Փորձէ սոխէ քեզ նըմանակ,  
 Իսկ յորժամ տեղան երկին ի ծագկունս՝  
 Անեւ զողջոյն և խոտեւ,  
 Աւակից Տորոյ՝ նորանոք գարունս  
 Նորոց զաշաց առեսու,  
 Թուշնի սիրունակ, բոյն քո միշտ գալար,  
 Քեզ միշտ պայծառ են երկնս,  
 Յերդս քո չրկան նըւոց արխարար,  
 Ի ոչ Ձբմնն ի քո տիս,  
 Ո՛հ, ո՛ սայր սիրտուս, և թն թո նըման  
 Ըզճակ անոնս ի իսակից,  
 Յերկեր համբըն յայցեւու շրջան  
 Լինել գարնան ուղեկից:

ԼՍԸԱ

## ԳԵՏԻՆ ՄԾՏԻԿ

Հասիս, հասիս այդպէս իրողով, ս՛վ Գետակ,  
 Փըրփո՛ւր – փըրփո՛ւր մերթ փըշըրի կուրծքը լոյժ,  
 Միբթ երազուն կը մենեղեղս խորքիդ սակ.  
 Դաս ալ ունիս երազ կամ յուր ծոցն աւուց:

Ըսէ ինձի, ինչ կը բերես լեռներէն,  
 Տըրտմնը, ծիծմնդ, սէր կարտի և կամ վեշտ,  
 Ահ, ըսէ՛ այդ ալիքներդ ինչ կը բերեն  
 Երբ կը զուռն սարերէն վար լաւով մըշտ:

Գիտեմ, զիտեմ անուկն ունիս մարտերուն...  
 Կը թորշուի քու ճակատդ ալ երերուն,  
 Եւ երբ նըստած ափերուդ մօտ կ'ըրազեմ

Ուր կը ընդէջ ջուրիդ մեղմ երբ և իմ,  
 Այն պահուն երբ մտի մը կ'ըլլես դու նըսն,  
 Բու ալիքդ ինձ կ'ըսէ. – Ե՛րս ալ կը մեծեմ...»:

ԱԼԱՐՈՒ

Հ. Բ. Ս.

